# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2897-Ա

« 08» հունիսի 2026 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝

1.Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/110 | 1 | Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Հաղթանակ թաղամաս 2-րդ փողոցի | 7784112 | «ՊԵՏ ՐՈՍՅԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ | 04257222 | ՀՀ, Արարատ, Վեդի, Նար-Դոս,Տ 17 | 30.04.2026թ. | Երևանի քաղաքապետարան | 1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետ (գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող լիցենզավորված կազմակերպություններ ի ցանկը, որով | Առկա չէ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վերջնամասում բաց ոռոգման ցանցի (առու, երկաթբետոնյա կոնստրուկցիաներով) կառուցման աշխատանքներ | | | | | | | պարզվել է, որ «ՊԵՏՐՈՍՅԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ն չի տիրապետում հրավերով պահանջվող՝ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝ Ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա) 03.08 ներդիրով առնվազն 3-րդ դասի լիցենզիային) | |

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ** 